«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի ռեկտոր

Հ.Հովհաննիսյան

«19» հունիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Միքայելյան Տիգրան Սամվելի Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2024թ. հունիսի 19 նիստում (Արձանագրություն թիվ 9):

Նիստին մասնակցում էին Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Թորոսյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Մ. Միքայելյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ս. Դավոյանը, տ.գ.թ., դոցենտ Հ. Հովհաննիսյանը, տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանը, տ.գ.դ., դոցենտ Ա. Մարտիրոսյանը, տ.գ.թ., դոցենտ Ա. Գաբրիելյանը, տ.գ.թ., դոցենտ Մ. Եղիազարյանը, տ.գ.թ., դոցենտ Վ. Գաբրիելյանը, տ.գ.թ., դոցենտ Հ. Գալստյանը և տ.գ.թ., ասիստենտ Ա. Գալստյանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության համար՝ պայմանավորված աշխարհագրական դիրքով և Հարավային Կովկասի տարածաշրջանում ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող տրանսպորտային կոմունիկացիաների զարգացման առումով,

մշտապես բախվում է աշխարհաքաղաքական որոշակի մարտահրավերների հետ, որոնք առաջացնում են որոշակի բարդություններ: Այսպես, Հայաստանի կողմից իրականացվող բեռնափոխադրումների և տրանսպորտային ծախսերի արժեքը ամենաբարձրներից մեկն են աշխարհում: Դա հիմնականում պայմանավորված է հարևան երկու (շրջափակումը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից) պետությունների հետ ոչ բարեկամական հարաբերություններով և ծովային ելքի բացակայությամբ: Դեպի ծով ելք չունենալը, համաշխարհային շուկաներից մեծ հեռավորությունը, սահմանների փակ լինելը դժվարացնում են արտաքին առևտուրը և շարունակում են լրջորեն սահմանափակել Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը: Հայաստանի միջազգային մրցունակության վրա ազդում են ոչ միայն տրանսպորտային ծառայությունների բարձր արժեքը, այլ նաև փոխադրման տևողության անկանխատեսելիությունը: Վերոնշյալ խնդիրները կարևոր ու անհրաժեշտ են դարձնում արտաքին առևտրի լոգիստիկ հիմնախնդիրների ուսումնասիրությունը Հայաստանի համար: Հետևաբար, հաշվի առնելով վերը նշվածը, հետազոտության արդիականությունը կասկած չի հարացում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը երկրների լոգիստիկ մրցունակության արտաքին մարտահրավերների բացահայտման, արտաքին առևտրի վրա դրա ազդեցության վերլուծության, լոգիստիկայի մրցակցային առավելությունների գնահատման հիման վրա համալիր մոտեցումների և առաջարկների մշակումն է, որոնց գործնական կիրառումը կնպաստի ՀՀ լոգիստիկ մրցունակության բարձրացմանը և արտաքին առևտրային հարաբերությունների խթանմանը:

Տվյալ նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առաջ են քաշվել և լուծվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրվել և վերլուծվել են լոգիստիկայի մրցունակության և արտաքին առևտրի փոխառնչությունների տեսամեթոդական հիմքերը,
- իրականացվել է լոգիստիկ շղթաների միջազգային մրցունակության վերլուծություն արտաքին առևտրի խթանման համատեքստում,

- հետազոտվել է լոգիստիկ քաղաքականության միջազգային մրցունակության խթանման միջազգային փորձը,
- գնահատվել է լոգիստիկայի և մրցունակության միջազգայնացման գործընթացների իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում,
- վերլուծվել է ՀՀ արտաքին առևտրի առկա վիճակն ու լոգիստիկ հիմնախնդիրները,
- իրականացվել է Հայաստանում լոգիստիկայի և ենթակառուցվածքների ազդեցության գործոնային հետազոտություն՝ տնտեսաչափական մոդելների կիրառմամբ,
- հետազոտվել է ՀՀ-ում լոգիստիկայի միջազգային մրցունակության բարձրացման հիմնական խոչընդոտները և մարտահրավերները,
- գնահատվել է ՀՀ արտաքին առևտրի քանակական և որակական զարգացման հեռանկարները՝ գրավիտացիոն մոդելի կիրառմամբ,
- նախանշվել է Հայաստանի լոգիստիկ ծայառությունների միջազգային մրցունակությանն ուղղված բարեփոխումների հիմնական ուղիները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթ արտացոլող հիմնական դրույթներն են.

- Գնահատվել է ՀՀ հիմնական առևտրային գործընկեր երկրրների, այդ թվում ԵԱՏՄ, ինչպես նաև տարածաշրջանային այլ երկրների փոխադարձ առևտրի ինտենսիվությունը, ինչի արդյունքում բացահայտվել է ՀՀ գործընկեր երկրների հետ փոխշահավետ առևտրի ներուժն ու նախանշվել դրա լիարժեք իրացման ուղիները:
- Արտահանվող ապրանքների արժեքի և բեռնափոխադրումների ծախսերի դինամիկայի ուսումնասիրության հիման վրա բացահայտվել են ԵԱՏՄ և տարածաշրջանի երկրների լոգիստիկ շղթաների արդյունավետության

բարձրացման և մրցունակության խթանման ուղիները, որի շրջանակներում հիմնավորվել է միջտարածաշրջանային լոգիստիկ կենտրոն ստեղծելու անհրաժեշտությունը:

- Տնտեսաչափական մոդելների կիրառմամբ գնահատվել է լոգիստիկ արդյունավետության համաթվի և դրա բաղադրիչների ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի տեմպերի վրա ու բացահայտվել առկա փոխառնչությունները:
- Գրավիտացիոն մոդելի միջոցով գնահատվել է հայ-թուրքական սահմանի բացման ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, մասնավորապես, բացահայտվել է բաց սահմանով Թուրքիայից Հայաստան ներմուծման և Հայաստանից Թուրքիա արտահանման ծավալների հնարավոր փոփոխությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրների վերաբերյալ կատարված հետազոտությունը և դրան առնչվող քանակական չափումները կարող են օգտակար լինել ՀՀ տնտեսական քաղաքականության մշակման և բարելավման համար: Աշխատանքի արդյունքները հնարավորություն են ստեղծում մշակել արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության բարձրացմանն ուղղված քաղաքականություն՝ ի նպաստ ՀՀ տնտեսության զարգացման: Ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են կիրառական նշանակություն ունենալ նաև հիմնախնդիրն ուսումնասիրող տնտեսագետների, պետական կառավարման մարմինների արտաքին տնտեսական հարաբերությունների գծով պատասխանատուների, ոլորտին առնչվող մասնավոր կառույցների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 135 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը (առանց հավելվածների):

Հետազոտության առաջին՝ **«Լոգիստիկան որպես համաշխարհային տնտեսության զարգացման առանցքային շարժիչ»**, գլխում ուսումնասիրվել են Լոգիստիկ մրցունակության և արտաքին առևտրի փոխհարաբերությունների տեսամեթոդական հիմքերը, վերլուծվել են լոգիստիկ շղթաների միջազգային մրցունակությունը արտաքին առևտրի խթանման համատեքստում, ինչպես նաև առաջ են քաշվել լոգիստիկ գործունեության կարգավորման մեխանիզմներն արտաքին առևտրում:

Ատենախոսության երկրորդ՝ **«Լոգիստիկայի արդի վիճակն ու հիմնախնդիրները ՀՀ արտաքին առևտրի խթանման համատեքստում»**, գլխում հեղինակի կողմից կատարվել է Հայաստանի միջազգային մրցունակության և լոգիստիկ իրավիճակի համեմատական վերլուծություն, ինչպես նաև ուսումնասիրվել է ՀՀ արտաքին առևտրի և լոգիստիկ համակարգի առկա վիճակը:

Ատենախոսության երրորդ՝ **«Լոգիստիկայի միջազգային մրցունակության բարելավման հիմնական առաջնահերթությունները՝ որպես ՀՀ արտաքին առևտրի խթանում»**, գլխում հեղինակի կողմից վեր են հանվել ՀՀ-ում լոգիստիկայի միջազգային մրցունակության բարձրացման հիմնական խոչընդոտները և մարտահրավերները, գրավիտացիոն մոդելի կիրառմամբ գնահատվել է ՀՀ արտաքին առևտրի քանակական և որակական զարգացման հեռանկարները և առաջ են քաշվել Հայաստանի լոգիստիկ ծայառությունների միջազգային մրցունակությանն ուղղված հիմնական բարեփոխումները:

Եզրակացություններ և առաջարկություններ բաժնում ամփոփվել և ներկայացվել են աշխատանքի հիմնական արդյունքները և կատարվել են մի շարք առաջարկություններ՝ հիմք ընդունելով հետազոտության արդյունքները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԱՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ, որոնցից կարելի առանձնացնել հետևյալները՝

1. Բավարար խորությամբ վերլուծված չեն լոգիստիկ մրցունակության տեսական հիմնադրույթները: Այս առումով հատկանշական է, որ առաջին ենթագլուխը

վերնագրված է՝ «Լոգիստիկ մրցունակության և արտաքին առևտրի փոխառնչությունների տեսամեթոդական հիմքերը», սակայն ենթագլխում «լոգիստիկ մրցունակություն» տերմինն ընդհանրապես կիրառված չէ, առավել ևս սահմանված չէ:

2. Աշխատանքում նշված երկրորդ նորույթը՝ միջտարածաշրջանային լոգիստիկ կենտրոն ստեղծելու անհրաժեշտությունը, առաջարկություն է, քան թե գիտական նորույթ:
3. Գրականության վերլուծությունը երբեմն մակերեսային բնույթ ունի: Օրինակ՝ ատենախոսությունում վկայակոչվում է Պրապվանի կողմից 2018թ-ին Թաիլանդի օրինակով կատարված ուսումնասիրությունը, որի համար կատարվում է հետևյալ դիտարկումը՝ «Հետազոտությունները ցույց են տվել, որ լոգիստիկ հատվածը նշանակալի ազդեցություն ունի Թաիլանդի տնտեսության վրա»: «Նշանակալի ազդեցություն» անորոշ դիտարկումը գիտական վերլուծության տեսանկյունից վիճարկելի արժեք է ներկայացնում, առավել ևս, որ Պրավպանի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ լոգիստիկ հատվածը համեմատած տնտեսության այլ հատվածների, նվազ դեր է խաղում ընդհանուր արդյունաբերության աճի խթանման գործում, և լոգիստիկ հատվածի վրա կատարված ներդրումային ծախսերը համեմատաբար փոքր ազդեցություն ունեն ազգային տնտեսության վրա:
4. Հղումների կատարման սկզբունքը ոչ միշտ է հստակ: Օրինակ՝ ատենախոսության առաջին ենթագլխում, երբ առաջին անգամ վկայակոչվում է «լոգիստիկ արդյունավետությունը», նշվում է, որ «լոգիստիկ արդյունավետությունը կարևոր գործոն է երկրի միջազգային մրցունակության և զարգացման համար, որն էլ, իր հերթին, կարևոր դեր է խաղում առևտրի հոսքերի ծավալների ընդլայնման հարցում»: Այս նախադասության վերջում իբրև հղում նշված է Բանիստերի և Բերեխմանի 2001թ-ի հոդվածը, սակայն տվյալ հոդվածում ո՛չ լոգիստիկ արդյունավետությունը, ո՛չ միջազգային մրցունակությունը քննարկման թեմա ընդհանրապես չեն հանդիսանում:

5. Ատենախոսությունում կիրառված ռեգրեսիոն վերլուծության մեթոդը բավարար չափով հիմնավորված չէ: Մասնավորապես, գնահատված յոթ մոդելներից յուրաքանչյուրում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակը բացատրվում է միայն մեկ գործոնով՝ լոգիստիկ արդյունավետության համաթվով կամ դրա բաղադրիչներով: Նման մոտեցման հիմնավորվածությունը բավական վիճարկելի է:
6. Կատարված եզրահանգումները երբեմն խիստ ընդհանրական բնույթ են կրում: Օրինակ՝ էջ 88-ում նշվում է՝ «Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացումը կարող է խթանել երկրում ձեռնարկատիրական գործունեությունը, ինչպես նաև նպաստել տնտեսության զարգացմանը: Բարեկարգված օդանավակայանները, երկաթուղիները, մայրուղիները կարող են նպաստել ենթակառուցվածքներ բաղադրիչի միավորի բարձրացմանը, ինչն էլ, իր հերթին, բերում է երկրի տնտեսության միջազգային մրցունակության դիրքի բարելավմանը»: Կարծում ենք, որ նման ակնհայտ դիտարկումներ կարելի է կատարել առանց որևէ ռեգրեսիոն վերլուծություն կատարելու:
7. Աշխատանքի վերջում, մեր կարծիքով, պետք է ներկայացվեր ոչ թե գրավիտացիոն մոդելի կիրառում կամ խոչընդոտների ու մարտահրավերների բացահայտում, ինչը նախընտրելի էր, որպեսզի իրականացվեր երկրորդ գլխում, այլ՝ դրանց արդյունքների հիման վրա լուծումների առաջարկում, որը հեղինակը ներկայացնում է 10 էջի շրջանակում երրորդ գլխի վերջին ենթագլխում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դիտողությունները չեն նվազեցնում տվյալ հետազոտության արդյունքների տեսական ու կիրառական նշանակությունը և նպատակ են հետապնդում տվյալ բնագավառում հեղինակի կողմից հետագայում կատարվելիք ուսումնասիրությունների որակի բարձրացում:

Միքայելյան Տիգրան Սամվելի «Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով

թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն կատարված և ամբողջական հետազոտություն է, որում առաջ քաշված նպատակը, խնդիրները և ստացված արդյունքները շատ կարևոր և անհրաժեշտ են տվյալ բնագավառի հետագա զարգացման և ուսումնասիրման համար:

Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակվել են վեց գիտական հոդվածներում և մեկ մենագրությունում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործել տվյալ հիմնախնդիրն ուսումնասիրող տնտեսագետները, պետական կառավարման մարմինները և արտաքին տնտեսական հարաբերությունների գծով մասնագետները:

Այսպիսով, Միքայելյան Տիգրան Սամվելի «Արտաքին առևտրի լոգիստիկ մրցունակության հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ:

Տնտեսագիտության և միջազգային
տնտեսական հարաբերությունների վարիչ
տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյան

Գրախոսներ
տ.գ.թ., դոցենտ Հ. Հովհաննիսյան
տ.գ.թ., դոցենտ Ա. Գաբրիելյան

Գրախոսների Հ. Հովհաննիսյանի և Ա. Գաբրիելյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ.

ԵՊՀ գիտական քարտուղար

Բ.գ.թ., դոցենտ Մերի Վազգենի Հովհաննիսյան